ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ԻՐՏԵԿ իրավական տեղեկատվական համակարգչային համակարգի օգտագործման իրավունքի տրամադրման և սպասարկման մասին» 2011 թ. դեկտեմբերի 12-ի թիվ 11/090 պայմանագրում լրացում և փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան « 26 » հունվարի 2015 թ.

Իրավական Տեղեկատվական Կենտրոն ՓԲԸ-ն, որը գործում է ընկերության կանոնադրության համաձայն, ի դեմս տնօրեն Ռոբերտ Ավագյանի, այսուհետ՝ ԿԵՆՏՐՈՆ, մի կողմից և ՀՀ Սփյուռքի նախարարությունն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ֆիլիպոս Զաքարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության համաձայն, այսուհետ՝ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ, մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսդրության դրույթները կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. Կողմերի միջև 2011 թ. դեկտեմբերի 12-ին կնքված «ԻՐՏԵԿ իրավական տեղեկատվական համակարգչային համակարգի օգտագործման իրավունքի տրամադրման և սպասարկման մասին» թիվ 11/090 պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Պայմանագրի 4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«4.1. Ներդրված համակարգի ամսական սպասարկման գինը՝ ներառյալ հարկերը, կազմում է 10000 (տասը հազար) դրամ:»:

բ) Պայմանագրի 4-րդ բաժինը լրացնել նոր՝ 4.4 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.
«4.4. Կենտրոնի շրջանառության հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցնելու դեպքում 4.2 կետով ծառայության համար սահմանված վճարներին գումարվում է այդ գումարների նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ն:»:

2. Սույն Համաձայնագիրը ստորագրված է երկու օրինակից (յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ):
3. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում 2015թ հունվարի 1-ից:

Կողմերի հասցեները և ստորագրությունները.

ԿԵՆՏՐՈՆ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ («ԻՐՏԵԿ») ՓԲԸ	ՀՀ Սփյուռքի նախարարություն
հասցե՝ 0009, ք.Երևան, Աբովյան 36	հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/1
հեռ. 527950 E-mail: info@irtek.am	հեռ. 585601
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, կոդ 20500 հ/հ 205002200991	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն հ/հ 900011039030
ՀՎՀՀ 01517279	ՀՎՀՀ 02705838
տնօրեն Ռ. Ավագյան _____	տնօրեն Ֆ. Զաքարյան _____
Կ.Տ.	Կ.Տ.